Luys Lույս®

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

# ՀՀ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ – 2022

*Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված՝ Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույցի (2023թ.) վերաբերյալ*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 1

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 3

2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ..... 5

2.1. Համաշխարհային միտումներն ու արդյունքները ..... 5

2.2. Գենդերային անհավասարությունն աշխարհի տարբեր հատվածներում ..... 6

3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ..... 7

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 11

ԱՄՓՈՓՈՒՄ ..... 13

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գենդերային անհավասարությունը համարվում է մարդկության առջև ծառացած կարևորագույն գլոբալ մարտահրավերներից մեկը: Այն, բացի նրանից, որ բացասաբար է անդրադառնում կանանց վրա, նաև վտանգավոր է երկրների տնտեսության և հասարակության ապագայի համար, քանի որ, եթե երկիրը չի օգտագործում իր մարդկային կապիտալի ողջ պոտենցիալը, երկարաժամկետում կարող է կորցնել իր մրցունակությունն ու հզորությունը:

Գենդերային անհավասարությունը դրսևորվում է կանանց և տղամարդկանց թե՛ ստանձնած պատասխանատվությունների և գործառույթների, թե՛ կրթական, սոցիալական, տնտեսական և այլ ռեսուրսներին հասանելիության և թե՛ որոշումների կայացմանը ներգրավվածության առումներով:

Նկատի ունենալով հիմնախնդրի կարևորությունը, էական ուշադրություն է դարձվում գենդերային անհավասարության աստիճանը չափելու և գնահատելու, ինչպես նաև միջերկրային և միջժամանակային համեմատություններ կատարելու հարցերին: Դրանցով զբաղվում են միջազգային տարբեր հեղինակավոր կազմակերպություններ, որոնցից առավել հայտնիներից է Համաշխարհային տնտեսական համաժողովը (ՀՏՀ): Կազմակերպությունը 2006 թվականից ի վեր հրապարակում է Համաշխարհային գենդերային անհավասարության ամենամյա զեկույցների շարքը: Դրանցում գնահատվում է աշխարհի տարբեր երկրներում գենդերային անհավասարության աստիճանը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռնվում իրականացնելու միջժամանակային և միջերկրային համեմատություններ:

ՀՏՀ տարեկան զեկույցներում ներկայացվում է **Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսը** (**ՀԳԱ ինդեքս**): Այն հաշվարկվում է չորս ենթաինդեքսների (*տնտեսական*, *քաղաքական*, *կրթական* և *առողջապահական*) հիման վրա և գնահատում է գենդերային հավասարության ասպարեզում տարբեր երկրներում և տարածաշրջաններում նախորդ տարում արձանագրված զարգացումները: Զեկույցում նաև նշվում է այդ երկրների և տարածաշրջանների՝ նախորդ տարվա ընթացքում գենդերային անհավասարությունը հաղթահարելու առումով առաջընթացը կամ հետընթացը: Զեկույցը, բացի այն, որ լայն գործիքակազմ է ապահովում միջազգային և տարածաշրջանային համեմատությունների ու համադրումների համար, նաև հնարավորություն է ընձեռում երկրներին՝ գենդերային անհավասարության հարցերի շրջանակում իրականացնելու տարբեր վերլուծություններ: Ըստ էության՝ այն կարելի է համարել գենդերային անհավասարությունը հաղթահարելու ուղղությամբ արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման յուրահատուկ ուղեցույց:

Զեկույցում նշվում է, որ կանանց և աղջիկների վրա Քովիդ-19 համավարակի և դրան հաջորդած տնտեսական և աշխարհաքաղաքական ճգնաժամերի՝ կրթության և աշխատանքի ոլորտներում ազդեցության հետևանքով առաջընթացի խաթարումը վերջին տարիներին հանգեցրել է գենդերային հավասարության զգալի հետընթացի: Նշվում է, որ, չնայած աշխարհի որոշ մասերում արձանագրվող մասնակի բարելավմանը, այլ մասերում, պայմանավորված նոր ճգնաժամերի առաջացումով, իրավիճակն էապես վատթարանում է:

ՀՏՀ-ն օրերս հրապարակել է «Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույց - 2023»-ը[1] (այսուհետ՝ Զեկույց): Զեկույցում ներառվել է 146 երկիր, որոնցից 102-ի մասով ՀԳԱ ինդեքսը մշտապես հաշվարկվել է (2006 թվականից ի վեր): Հայաստանը զեկույցներում ներառված է 2007 թվականից: Նախորդ տարվա համեմատ՝ 2023 թվականի Զեկույցում ընդգրկվել է մեկ նոր երկիր: Միևնույն ժամանակ, նախորդ զեկույցից մեկ երկիր այս տարվա զեկույցում չի ներառվել:

Զեկույցում աշխարհի երկրները խմբավորված են 8 տարածաշրջանային խմբերում՝ *«Եվրոպա», «Հյուսիսային Ամերիկա», «Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազանի երկրներ», «Եվրասիա և Կենտրոնական Ասիա», «Ենթասահարական Աֆրիկա», «Արևելյան Ասիա և խաղաղօվկիանոսյան երկրներ», «Հարավային Ասիա», «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա»*: Հարկ է նշել, որ 2023 թվականի Զեկույցում նախորդ զեկույցի համեմատ անվանափոխվել է *«Կենտրոնական Ասիա»* տարածաշրջանային խումբը (նոր անվանումը՝ *«Եվրասիա և Կենտրոնական Ասիա»*): Այս խմբում է ընդգրկված նաև Հայաստանը:

«Լույս» հիմնադրամը մշտապես հրապարակում է վերլուծություններ միջազգային հեղինակավոր կառույցների ինդեքսների (այդ թվում՝ նաև ՀԳԱ ինդեքսի) վերաբերյալ[2]: «ՀԳԱ ինդեքս - 2022»-ին վերաբերող սույն վերլուծությունում կանդրադառնանք ՀՀ գնահատականներին ու տարածաշրջանային համադրումներին, ինչպես նաև ՀՏՀ-ի կողմից ներկայացված առավել ուշագրավ փաստերին:

Վերլուծության առաջին մասը նվիրված է ՀԳԱ ինդեքսի և դրա հաշվարկման մեթոդաբանության համառոտ նկարագրությանը: Երկրորդ մասում հակիրճ ներկայացված են Զեկույցի ընդհանուր գնահատականները՝ համաշխարհային

[1] Ամբողջական զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2023.pdf:

[2] «ՀԳԱ ինդեքս - 2021»-ի վերաբերյալ «Լույս» հիմնադրամի կողմից իրականացված վերլուծությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.luys.am/...ՀՀԳԵՆԴԵՐԱՅԻՆԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆԻՆԴԵՔՍ-2021.pdf:

կտրվածքով: Այնուհետև վերլուծված է դրանում ներառված՝ Հայաստանին վերաբերող տեղեկատվությունը: Վերլուծության չորրորդ մասում ներկայացվել են տարածաշրջանային համադրումներն ու Հայաստանի դիրքը ընդհանուր համապատկերում: Վերջում շարադրված է վերլուծության հակիրճ ամփոփումը:

## 1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսը հաշվարկվում է հետևյալ 4 ենթաինդեքսների հիման վրա՝

*1) Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ*,

*2) Կրթության ձեռքբերում*,

*3) Առողջություն և կյանքի տևողություն*,

*4) Քաղաքական մասնակցություն*:

***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** ենթաինդեքսի հիմքում ընկած են հինգ ցուցանիշներ՝ «*Աշխատուժի մասնակցության մակարդակ*», «*Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն*», «*Վաստակած եկամուտ*», «*Օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն*» և «*Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն*»:

***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսը բնութագրում է կանանց և տղամարդկանց միջև կրթության հասանելիության անհավասարության աստիճանը (այսուհետ՝ նաև գենդերային ճեղքվածք) և հաշվարկվում է հետևյալ չորս ցուցանիշների հիման վրա՝ «*Գրագիտության մակարդակ*», «*Տարրական կրթական համակարգում ներգրավվածություն*», «*Միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածություն*» և «*Բարձրագույն կրթական համակարգում ներգրավվածություն*»:

***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսը արտացոլում է գենդերային ճեղքվածքը առողջապահական տեսանկյունից՝ երկու ցուցանիշների համադրման միջոցով՝ «*Երկու սեռերի նորածինների թվաքանակների հարաբերակցություն*» և «*Առողջ կյանքի տևողություն*» (որպես կանանց և տղամարդկանց՝ առողջ ապրելու միջին տարիների քանակական հարաբերակցություն):

***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսով գնահատվում է քաղաքական որոշումների կայացման բարձրագույն օղակներում կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունը: Այդ նպատակով օգտագործվում են երեք ցուցանիշներ՝ «*Կանայք խորհրդարանում*», «*Կանայք կառավարությունում*» և

*«Պետության ղեկավարի պաշտոնում վերջին հիսուն տարում կանանց և տղամարդկանց կողմից պաշտոնավարելու տարիների հարաբերակցությունը»*:

ՀԳԱ ինդեքսի հաշվարկման գործընթացի հիմքում ընկած են ***երեք հիմնական սկզբունքներ.***

*1. Երկրների դասակարգումը կատարվում է <u>գենդերային ճեղքվածքի</u> և ոչ թե երկրների զարգացածության մակարդակի հիման վրա:*

*2. Ինդեքսի հաշվարկման համար ընտրվում են միայն <u>ելքային</u> ցուցանիշներ* (ընդհանրական բոլոր երկրների համար), որոնք կախվածություն չպետք է ունենան տվյալ երկրի քաղաքական, իրավական, մշակութային կամ սոցիալական առանձնահատկություններից:

*3. Ինդեքսը համարվում է բարելավված միայն գենդերային ճեղքվածքի նվազման դեպքում* (և ոչ թե այն դեպքում, երբ կանայք տղամարդկանցից ավելի նախընտրելի պայմաններում են գտնվում):

ՀԳԱ ինդեքսի կառուցման գործընթացը բաղկացած է չորս քայլից.

*Քայլ 1.* Ցուցանիշներից ստացված տվյալները վերածվում են կին/տղամարդ քանակական հարաբերակցության:

*Քայլ 2.* Ստացված հարաբերակցությունների համար որոշվում է «գենդերային հավասարության ցուցիչը», որը գրեթե բոլոր դեպքերում ընդունվում է հավասար 1-ի (բացառություն են կազմում միայն երկու հարաբերակցություններ. ըստ սեռի՝ նորածինների թվաքանակների հարաբերակցության համար՝ 0.944, իսկ առողջ կյանքի սպասվող տարիների հարաբերակցության համար՝ 1.06):

*Քայլ 3.* Հաշվարկվում են չորս ենթաինդեքսները՝ որպես դրանց հիմքում ընկած ցուցանիշների կշռված միջին:

*Քայլ 4.* Հաշվարկվում է ՀԳԱ ինդեքսը՝ որպես 3-րդ քայլում ստացված ենթաինդեքսների թվաբանական միջին: Ինչպես և ենթաինդեքսները, ՀԳԱ ինդեքսի արժեքները 0-ից 1 միջակայքից են, ընդ որում, 1-ը ցույց է տալիս սեռերի միջև լիակատար հավասարություն, իսկ 0-ն՝ լիակատար անհավասարություն:

**Հաճախ ՀԳԱ ինդեքսի փոխարեն դիտարկվում է դրա 100-պատիկ մեծ (տոկոսով արտահայտված) արժեքը, որը կարելի է մեկնաբանել որպես տվյալ երկրի գենդերային անհավասարության հաղթահարման սահման՝ տոկոսային արտահայտությամբ:** Այսինքն, եթե, օրինակ՝ Հայաստանի ինդեքսը 2022թ. 0.721 է, ապա կարելի է ասել, որ մեր երկիրը հաղթահարել է գենդերային

անհավասարությունը 72.1%-ով, կամ՝ լիակատար գենդերային հավասարության հասնելու համար մնում է հաղթահարել 27.9%-ը:

## 2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսի միջազգային գնահատումները 2022 թվականի համար ներկայացված են ստորև:

### *2.1. Համաշխարհային միտումներն ու արդյունքները*

**Աշխարհում գենդերային անհավասարությունը հաղթահարված է միջին հաշվով 68.4%-ով** (2021 թվականի ցուցանիշից 0.3 տոկոսային կետով ավելի): Ընդ որում, նախորդ տարվա համեմատ 2022-ն ավելի բարենպաստ է եղել՝ այն իմաստով, որ ավելի մեծ թվով երկրներ են «կրճատել» իրենց գենդերային ճեղքվածքը (42 երկիր՝ 1 և ավելի տոկոսով, և 40 երկիր՝ մինչև 1 տոկոսով): *Այնուամենայնիվ, համաձայն ՀՏՀ գնահատումների՝ բարելավման ներկայիս տեմպերը չեն կարող գոհացուցիչ համարվել (դրանց պահպանվելու դեպքում համաշխարհային գենդերային ճեղքվածքն ամբողջությամբ փակելու համար աշխարհից կպահանջվի միջին հաշվով 131 տարի):*

**ՀԳԱ ինդեքսի ենթաինդեքսների մեջ ամենամեծ ճեղքվածքը շարունակում է ունենալ *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսը**. գենդերային ճեղքվածքը փակ է ընդամենը 22.1%-ով: *ՀՏՀ գնահատումների համաձայն՝ ներկայիս միտումների և տեմպերի պահպանման պայմաններում, կպահանջվի ևս 162 տարի, որպեսզի քաղաքական մասնակցության մասով գենդերային ճեղքվածքն աշխարհում փակվի:*

**Բոլոր ենթաինդեքսների մեջ *«Տնտեսական մասնակցության և հնարավորությունների»* ենթաինդեքսի գծով գենդերային ճեղքվածքը շարունակում է մնալ երկրորդ ամենամեծը:** Համաձայն գնահատումների՝ աշխարհում այս մասով անհավասարությունը հաղթահարված է 60.1%-ով: *ՀՏՀ գնահատումները փաստում են, որ աշխարհից կպահանջվի ևս 169 տարի՝ տնտեսական մասնակցության և հնարավորությունների մասով լիակատար հավասարության հասնելու համար:*

**Գենդերային ճեղքվածքն ավանդաբար փոքր է *«Կրթության ձեռքբերում»*, և *«Առողջություն և կյանքի տևողություն»* ենթաինդեքսների մասով:** Առաջինի մասով գենդերային ճեղքվածքը փակ է 95.2%-ով, իսկ 30 երկիր արդեն իսկ հասել է լիակատար հավասարության: *Համաձայն ՀՏՀ գնահատումների՝ ներկայիս տեմպերի պահպանման պարագայում այս ճեղքվածքն ամբողջությամբ փակվելու*

*համար կպահանջվի 16 տարի:* Երկրորդ ենթաինդեքսի մասով համաշխարհային մակարդակով հաղթահարված է գենդերային անհավասարության 96.0%-ը:

Բոլոր տարիների (2006 թվականից սկսած) զեկույցներում մշտապես ընդգրկված 102 երկրների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարիների ընթացքում գենդերային անհավասարության ինդեքսը, ինչպես նաև դրա չորս ենթաինդեքսներից երեքը (բացառությամբ *«Առողջություն և կյանքի տևողություն»* ենթաինդեքսի) բարելավվել են:

### *2.2. Գենդերային անհավասարությունն աշխարհի տարբեր հատվածներում*

Գենդերային հավասարության վարկանիշային աղյուսակը 14 տարի անընդմեջ գլխավորում է Իսլանդիան, որը գենդերային անհավասարությունը հաղթահարել է 91.2%-ով: Երկրորդ տեղում Նորվեգիան է (87.9%), երրորդում՝ Ֆինլանդիան (86.3%): Կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը 80 և ավելի տոկոսով հաղթահարված է աշխարհի 9 երկրներում: Աղյուսակի առաջին տասնյակում են նաև հետևյալ երկրները՝ Նոր Զելանդիա (4-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.856), Շվեդիա (5-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.815), Գերմանիա (6-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.815), Նիկարագուա (7-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.811), Նամիբիա (8-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.802), Լիտվա (9-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.802) և Բելգիա (10-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.796):

Ինչպես միշտ, գենդերային հավասարության մակարդակները զգալիորեն տարբերվում են կախված տարածաշրջանից: 2022 թվականին առաջատարը «Եվրոպան» է՝ գենդերային հավասարության 76.3% ցուցանիշով (2021-ին առաջատարը «Հյուսիսային Ամերիկան» էր՝ 76.9% ցուցանիշով), որից լիակատար հավասարության հասնելու համար կպահանջվի ևս 67 տարի: Երկրորդը «Հյուսիսային Ամերիկան» է (75.0%՝ 95 տարի), երրորդը՝ «Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազանի երկրները» (74.3%՝ 53 տարի): Վարկանիշով հաջորդում են «Եվրասիա և Կենտրոնական Ասիան» (69.0%՝ 167 տարի), «Արևելյան Ասիա և խաղաղօվկիանոսյան երկրները» (68.8%՝ 189 տարի), «Ենթասահարական Աֆրիկան» (67.9%՝ 98 տարի), «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկան» (62.6%՝ 152 տարի) և «Հարավային Ասիան» (63.4%՝ 149 տարի):

## 3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում գենդերային անհավասարության ինդեքսը (այսուհետ՝ նաև ՀՀ ինդեքս) 2022թ. կազմել է 0.721, և 146 երկրներ ներառող վարկանիշային աղյուսակում մեր երկիրը զբաղեցրել է 61-րդ հորիզոնականը (Գծապատկեր 1):

**Գծապատկեր 1. Գենդերային անհավասարության ինդեքսը Հայաստանում և ՀՀ դիրքն ըստ ինդեքսի, 2007-2022թթ.**




Հայաստանում գենդերային ճեղքվածքի կրճատման դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2010-2014թթ. գենդերային անհավասարության խորացման շրջափուլից հետո այն նկատելիորեն արագացել է (բացառությամբ 2020 թվականի): 2007 թվականից հետո 2022 թվականին Հայաստանի զբաղեցրած դիրքը առավելագույնն է:

Գենդերային անհավասարության ինդեքսով Հայաստանը 3.7 տոկոսային կետով գերազանցում է աշխարհի միջինին (Գծապատկեր 2):

**Գծապատկեր 2. ՀՀ գենդերային անհավասարության ինդեքսը/ենթաինդեքսները և աշխարհի միջին գնահատականները, 2022 թվական**




2022թ. արդյունքներով ՀԳԱ ***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** և ***«Կրթության ձեռքբերում»*** երկու ենթաինդեքսների գծով Հայաստանն առաջ է աշխարհի միջին գնահատականներից: Գծապատկեր 2-ից երևում է, որ վերոհիշյալ երկու ենթաինդեքսներից առաջինի մասով Հայաստանը գենդերային անհավասարությունը հաղթահարել է 71.6%-ով, մինչդեռ աշխարհում այն հաղթահարված է միջին հաշվով 60.1%-ով, իսկ երկրորդի մասով ՀՀ-ում գենդերային ճեղքվածքը գրեթե ամբողջությամբ փակ է (99.9%), և այն գերազանցում է աշխարհի միջին ցուցանիշին 4.7 տոկոսային կետով:

***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսը ցույց է տալիս, որ Հայաստանում 2022թ. այս առումով գենդերային անհավասարությունը հաղթահարվել է 95.5%-ով, ինչն աշխարհի միջին ցուցանիշից պակաս է 0.5 տոկոսային կետով:

Քաղաքական մասնակցության մասով գենդերային անհավասարության հաղթահարման առումով Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել (2021-ի համեմատ ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսն աճել է 0.045-ով) և աշխարհի միջին ցուցանիշին զիջում է 0.6 տոկոսային կետով:

Հայաստանում գենդերային անհավասարության հաղթահարման գործընթացի վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվություն ներկայացված է Աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1. Հայաստանի գենդերային անհավասարության ենթաինդեքսները և դրանց հաշվարկում օգտագործվող ցուցանիշները, 2021-2022թթ.**

| | Տարի | Դիրք | << ինդեքս | Աշխարհի միջին, % | Կին | Տղամարդ |
|---|---|---|---|---|---|---|
| **Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ** | **2021** | **84** | **66.9%** | **60.3%** | | |
| | **2022** | **52** | **71.6%** | **60.1%** | | |
| • *Աշխատուժի մասնակցության մակարդակ* | 2021 | 101 | 67.7% | | 42.7% | 63.0% |
| | 2022 | 26 | 87.4% | | 62.8% | 71.4% |
| • *Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն, 1-7 (լավագույն)* | 2021 | 15 | 75.9% | | - | - |
| | 2022 | 35 | 70.8% | | - | - |
| • *Վաստակած եկամուտ, ԱՄՆ դոլար* | 2021 | 118 | 50.6% | | 8,640 | 17,100 |
| | 2022 | 83 | 62.7% | | 11,200 | 17,880 |
| • *Օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն* | 2021 | 87 | 44.6% | | 30.9% | 69.1% |
| | 2022 | 93 | 42.2% | | 29.7% | 70.3% |
| • *Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն* | 2021 | 1 | 100% | | 65.5% | 34.5% |
| | 2022 | 1 | 100% | | 58.9% | 41.1% |
| **Կրթության ձեռքբերում** | **2021** | **28** | **100.0%** | **94.4%** | | |
| | **2022** | **35** | **99.9%** | **95.2%** | | |
| • *Գրագիտության մակարդակ* | 2021 | 53 | 99.9% | | - | - |
| | 2022 | 57 | 99.9% | | - | - |
| • *Տարրական կրթական համակարգում ներգրավվածություն* | 2021 | 1 | 100.0% | | 89.6% | 89.5% |
| | 2022 | 75 | 99.8% | | 89.3% | 89.4% |
| • *Միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածություն* | 2021 | 1 | 100% | | 89.3% | 85.5% |
| | 2022 | 1 | 100% | | 87.7% | 90.3% |
| • *Բարձրագույն կրթական համակարգում ներգրավվածություն* | 2021 | 1 | 100% | | 60.7% | 42.1% |
| | 2022 | 1 | 100% | | 66.3% | 46.0% |
| **Առողջություն և կյանքի տևողություն** | **2021** | **139** | **95.4%** | **95.8%** | | |
| | **2022** | **139** | **95.5%** | **96.0%** | | |
| • *Նորածինների հարաբերակցություն ըստ սեռի* | 2021 | 143 | 90.7% | | - | - |
| | 2022 | 143 | 90.9% | | - | - |
| • *Առողջ կյանքի տևողության տարիներ* | 2021 | 1 | 106.0% | | - | - |
| | 2022 | 1 | 106.0% | | - | - |
| **Քաղաքական մասնակցություն** | **2021** | **89** | **17.0%** | **22.0%** | | |
| | **2022** | **71** | **21.5%** | **22.1%** | | |
| • *Կանայք խորհրդարանում* | 2021 | 39 | 55.0% | | 35.5% | 64.5% |
| | 2022 | 38 | 55.0% | | 35.5% | 64.5% |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| • *Կանայք կառավարությունում* | 2021 | 148 | 0.0% | | 0.0% | 100% |
| | 2022 | 98 | 18.2% | | 15.4% | 84.6% |
| • *Պետության կին/տղամարդ ղեկավարների իշխանության տարիներ (վերջին 50 տարիների կտրվածքով)* | 2021 | 78 | 0.0% | | 0 | 50 |
| | 2022 | 80 | 0.0% | | 0 | 50 |

Աղյուսակից երևում է, որ 2022-ին ***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** ենթաինդեքսի արժեքը նախորդ տարվա համեմատ աճել է 4.7 տոկոսային կետով: Ընդ որում, եթե նախորդ տարի ենթաինդեքսի աճը հիմնականում պայմանավորված էր *«Օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն»* ցուցանիշի աճով (2021-ին այն 2020-ի համեմատ աճել էր 9.1 տոկոսային կետով), ապա այս տարի այն պայմանավորված է երկու այլ՝ «*Աշխատուժի մասնակցության մակարդակ*» և «*Վաստակած եկամուտ*» ցուցանիշների բարելավմամբ՝ համապատասխանաբար 19.7 և 12.1 տոկոսային կետով: Իսկ *«Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն»* և *«Օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն»* ցուցանիշները նվազել են (համապատասխանաբար 5.1 և 2.4 տոկոսային կետով): *«Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն»* ցուցանիշը նախկինի պես 100% է:

***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսի և դրա բաղկացուցիչների գնահատականները Հայաստանում ավանդաբար բարձր են: Այնուամենայնիվ, եթե նախորդ տարի ենթաինդեքսն ուներ 100-տոկոսանոց արժեք, ապա 2022-ին այն փոքր չափով (0.1 տոկոսային կետով) նվազել է: Հատկանշական է, որ ենթաինդեքսում գնահատումներն իրականացվում են տվյալ երկրի կրթական համակարգում ներգրավված կանանց և տղամարդկանց հավասարության հիման վրա:

2022-ին ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսի ցուցանիշը 2021-ի համեմատ բարելավվել է 0.1 տոկոսային կետով և կազմել 95.5% (բարելավումը բացառապես պայմանավորված է *«Նորածինների հարաբերակցություն ըստ սեռի»* ցուցանիշի աճով):

2021 թվականի համեմատ ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսի հայաստանյան ցուցանիշի **4.5 տոկոսային կետով բարելավումը բացառապես պայմանավորված է երկու կին նախարարների նշանակմամբ: Ընդ որում, Զեկույցի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հիշյալ ենթաինդեքսի այդ չափով բարելավման նպաստումը կազմում է ՀՀ ինդեքսի ընդհանուր բարելավման մոտավորապես կեսը:**

# 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Համաշխարհային տնտեսական համաժողովի դասակարգմամբ Հայաստանը ներառված է «Եվրասիա և Կենտրոնական Ասիա» տարածաշրջանում: Այս բաժնում ներկայացված է Հայաստանի տարածաշրջանային, ինչպես նաև սահմանակից երկրների հետ համեմատական վերլուծությունը:

**Աղյուսակ 2. ՀԳԱ ինդեքսը Կենտրոնական Ասիայի երկրներում, 2021-2022թթ.**

| Երկիր | 2021 թվական | | | 2022 թվական | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Դիրքը տարածաշրջանում | Դիրքն աշխարհում | Ինդեքս, % | Դիրքը տարածաշրջանում | Դիրքն աշխարհում | Ինդեքս, % |
| Մոլդովա | 1 | 16 | 78.8 | 1 | 19 | 78.8 |
| Բելառուս | 2 | 36 | 75.0 | 2 | 41 | 75.2 |
| ***Հայաստան*** | ***7*** | ***89*** | ***69.8*** | ***3*** | ***61*** | ***72.1*** |
| Ղազախստան | 4 | 65 | 71.9 | 4 | 62 | 72.1 |
| Ուկրաինա | 5 | 81 | 70.7 | 5 | 66 | 71.4 |
| Վրաստան | 3 | 55 | 73.1 | 6 | 76 | 70.8 |
| Ղրղզստան | 6 | 86 | 70.0 | 7 | 84 | 70.0 |
| Ադրբեջան | 8 | 101 | 68.7 | 8 | 97 | 69.2 |
| Տաջիկստան | 9 | 114 | 66.3 | 9 | 111 | 67.2 |
| Թուրքիա | 10 | 124 | 63.9 | 10 | 129 | 63.8 |

Հատկանշական է, որ 2022-ին Հայաստանը տարածաշրջանային վարկանիշային աղյուսակում նախորդ տարվա համեմատ չորս հորիզոնականով բարելավել է իր դիրքը և զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը:

Նշենք նաև, որ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ՝ Զեկույցում ներառված երկրներից[3] ՀԳԱ ինդեքսով և աշխարհում զբաղեցրած դիրքով Հայաստանը զիջում է միայն Բելառուսին, որը գենդերային անհավասարությունը հաղթահարել է 75.2%-ով և աշխարհում 41-րդն է:

[3] Ռուսաստանի Դաշնությունը «Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույց - 2023»-ում ներառված չէ:

Զեկույցում ներառված ԵԱՏՄ երկրներից միայն Հայաստանին և Ղազախստանին է հաջողվել 2021-ի համեմատ միաժամանակ և՛ բարձրացնել ինդեքսը, և՛ բարելավել աշխարհի վարկանիշային աղյուսակում իրենց դիրքը: Բելառուսը, չնայած գենդերային անհավասարության ինդեքսի 0.2 տոկոսային կետով բարելավմանը, այնուամենայնիվ, վարկանիշային աղյուսակում նահանջել է 5 հորիզոնականով: Ղրղզստանի նահանջը 2 հորիզոնական է, իսկ ինդեքսը չի փոխվել:

Աղյուսակ 3-ում ներկայացված են գենդերային անհավասարության ինդեքսը և ենթաինդեքսները Հայաստանում և սահմանակից երկրներում:

**Աղյուսակ 3. Գենդերային անհավասարության ինդեքսը և ենթաինդեքսները Հայաստանում և հարևան երկրներում, 2022 թվական**

| Ցուցանիշ / Երկիր | | *Հայաստան* | Վրաստան | Ադրբեջան | Թուրքիա | Իրան |
|---|---|---|---|---|---|---|
| **ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ** | **Ինդեքս, %** | ***72.1*** | **70.8** | **69.2** | **63.8** | **57.5** |
| | ***Դիրք*** | ***61*** | **76** | **97** | **129** | **143** |
| • Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ | Ինդեքս, % | *71.6* | 69.7 | 76.6 | 50.0 | 34.4 |
| | *Դիրք* | *52* | 68 | 27 | 133 | 144 |
| • Կրթության ձեռքբերում | Ինդեքս, % | *99.9* | 100.0 | 99.6 | 98.0 | 96.0 |
| | *Դիրք* | *35* | 28 | 54 | 99 | 112 |
| • Առողջություն և կյանքի տևողություն | Ինդեքս, % | *95.5* | 97.4 | 93.6 | 96.6 | 96.4 |
| | *Դիրք* | *139* | 56 | 146 | 100 | 116 |
| • Քաղաքական մասնակցություն | Ինդեքս, % | *21.5* | 16.3 | 7.1 | 10.6 | 3.1 |
| | *Դիրք* | *71* | 91 | 134 | 112 | 143 |

Աղյուսակից երևում է, որ 2022 թվականի արդյունքներով Հայաստանը գենդերային անհավասարության ինդեքսով գերազանցում է բոլոր հարևան երկրներին՝ հիմնականում պայմանավորված ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսով Հայաստանում արձանագրված առաջընթացով: Հարևաններից երկրորդ բարձր արդյունքն ունի Վրաստանը, որտեղ գենդերային անհավասարությունը հաղթահարված է 70.8%-ով, իսկ աշխարհի երկրների վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 76-րդ հորիզոնականը: Վրաստանին հաջորդում է Ադրբեջանը (69.2%, 97-րդ հորիզոնական): Չորրորդ տեղում Թուրքիան է (63.8%, 129-րդ հորիզոնական), վերջինը՝ Իրանը (57.5%, 143-րդ հորիզոնական):

Հարկ է նշել, որ ***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** ենթաինդեքսով Հայաստանը հարևաններից զիջում է միայն Ադրբեջանին (5.0 տոկոսային կետով): ***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսով Հայաստանը

զիջում է միայն Վրաստանին (0.1 տոկոսային կետով): ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսի մասով առաջ է միայն Ադրբեջանից, որն աշխարհում 146-րդն է, իսկ Հայաստանը՝ 139-րդը: ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսով Հայաստանը գերազանցում է բոլոր հարևաններին:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով՝ նշենք.

- Նախորդ տարվա համեմատ ՀԳԱ համաշխարհային միջինը ավելացել է 0.3 տոկոսային կետով և կազմում է 68.4% (0.684): Վերջին 17 տարիների բարելավման միջին տեմպերը պահպանվելու դեպքում համաշխարհային գենդերային ճեղքվածքն ամբողջությամբ փակելու համար կպահանջվի 131 տարի:
- Գենդերային հավասարության ցուցանիշներով աշխարհի երկարամյա առաջատարը Իսլանդիան է, որտեղ գենդերային անհավասարությունը հաղթահարված է 91.2%-ով:
- Հայաստանը, գենդերային անհավասարության 72.1% ինդեքսով, բարելավել է իր դիրքն աշխարհում՝ 2021 թվականի 89-րդ հորիզոնականից տեղափոխվելով 61-րդ հորիզոնական: 2021 թվականի համեմատ Հայաստանը 2022-ին իր դիրքն աշխարհում բարելավել է 2 ենթաինդեքսների *(«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»* և *«Քաղաքական մասնակցություն»*) մասով: **Հատկանշական է, որ ինդեքսի բարելավման մեջ վճռորոշ նշանակություն է ունեցել *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսի 4.5 տոկոսային կետով բարելավումը, որը բացառապես պայմանավորված է երկու կին նախարարների նշանակմամբ: Ընդ որում, ինդեքսի ընդհանուր բարելավման մոտավորապես կեսն այս ենթաինդեքսի բարելավման շնորհիվ է:**
- Հայաստանի ինդեքսը գերազանցում է համաշխարհային միջինին, սակայն *«Առողջություն և կյանքի տևողություն»* և *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսների արժեքները ցածր են դրանց համաշխարհային միջին մակարդակներից:
- «Եվրասիա և Կենտրոնական Ասիա» տարածաշրջանի 10 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը:
- Գենդերային անհավասարության ինդեքսով և աշխարհում զբաղեցրած իր դիրքով Հայաստանը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ՝ Զեկույցում ներառված երկրներից զիջում է միայն Բելառուսին:
- Գենդերային անհավասարության 2022թ. ինդեքսով Հայաստանը գերազանցում է սահմանակից երկրներին՝ հիմնականում

պայմանավորված ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսով Հայաստանում արձանագրված առաջընթացով: Երկրորդ բարձր արդյունքով երկիրը Վրաստանն է, երրորդը՝ Ադրբեջանը, չորրորդը՝ Թուրքիան: Ցուցակը եզրափակում է Իրանը:

***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** ենթաինդեքսով Հայաստանը հարևաններից զիջում է միայն Ադրբեջանին, իսկ ***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսով՝ միայն Վրաստանին: ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսի մասով Հայաստանը, բացառությամբ Ադրբեջանի, զիջում է մնացած բոլոր հարևաններին: ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսով Հայաստանը գերազանցում է բոլոր հարևաններին:

*«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:*

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*